ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 123-րդ հոդվածը՝ Ձեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազը մեկ քառորդի պահանջը՝ հասարակական հետաքրքրություն ներկայացնող՝ «Ռազմագերիների, պատանդների, անհայտ կորածների և պահվող այլ անձանց ճակատագրի պարզման և հայրենիք վերադարձնելու խնդիրները» թեմայով՝ 2021թ. նոյեմբերի 16-ին գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի երեքշաբթի օրվա երրորդ հիմնական նիստում հրատապ քննարկում անցկացնելու վերաբերյալ:

Հասարակական հետաքրքրություն ներկայացնող նշված հարցի (թեմայի) քննարկման կարևորությունը, առաջնայնությունը և հրատապությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև արդեն մեկ տարուց ավելի է դադարեցվել են ակտիվ ռազմական գործողությունները, սակայն առ այսօր հստակ չեն մեր այն հայրենակիցների ճակատագրերը, որոնք անհայտ կորել են կամ գտնվում են գերության մեջ՝ ռազմագերու, պատանդի և բռնի պահման այլ անվանումների ներքո: Ադրբեջանի չդադարող ագրեսիվ վարքագիծը՝ զուգորդված սպառնալիքներով, ռազմական ակտիվ գործողությունների դադարից հետո գերևարման դեպքերով և միջազգային հանցագործություններ համարվող գործողություններով, առավել են սրում մեր հայրենակիցների կյանքին սպառնացող վտանգները, ծանրագույն պայմանների մեջ են դնում նշված անձանց հարազատներին, բարեկամների և մտահոգ բազմահազար քաղաքացիների՝ ստիպելով նրանց կազմակերպել բազմաթիվ բողոքի ակցիաներ և առաջադրել պարզ հարցադրումներ, որոնք հիմնականում մնում են անպատասխան: Այս

համատեքստում առավել է սրվում հարցը, քանի որ առ այսօր բացակայում է գերիների, պատանդների և պահվող այլ անձանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, պարզ չէ բազմաթիվ անհայտ կորած անձանց գտնվելու վայրը: Սա այն դեպքում, երբ վարչապետի 19 նոյեմբերի 2018 թվականի N 1535-Ա որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի ղեկավարմամբ, պատկան կառույցների ներգրավվմամբ իբրև թե ստեղծվել և մշտապես պետք է գործեր նշված անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով, որի գործունեության և արձանագրված արդյունքների վերաբերյալ այդպես էլ որևէ տեղեկատվություն չի ներկայացվում: Այս կենսական կարևորության հարցը պետք է լիներ Հայաստանի քաղաքական իշխանության ամենժամյա գործունեության առարկան՝ արտաքին քաղաքականությունից սկսած ներքինով ավարտված: Մինչդեռ մենք ականատեսն ենք իշխանության չհամակարգված աշխատանքի, վերջինիս անպատասխանատու, հաճախ իրար հակասող հայտարարությունների և գործելակերպի:

Սույն պահանջը ներկայացրած պատգամավորների ներկայացուցիչն է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Աննա Գրիգորյանը (հիմնական զեկուցող):

Առաջարկում ենք, որպես հարակից զեկուցողներ ներգրավել Կառավարության անդամներ Նիկոլ Փաշինյանին, Արշակ Կարապետյանին և Արարատ Միրզոյանին, ինչպես նաև Ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա. Աբազյանին:

08.11.2021թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ՝

հ/հ	անուն և ազգանուն		ստորագրություն
1.	[illegible]	078	
2.	[illegible]	080	
3.	[illegible]	084	
4.	[illegible]	079	
5.	[illegible]	094	
6.	[illegible]	091	
7.	[illegible]	100	
8.	[illegible]	077	
9.	[illegible]	103	
10.	[illegible]	08[illegible]	
11.	[illegible]	106	
12.	[illegible]	107	
13.	[illegible]	102	
14.	[illegible]	105	
15.	[illegible]	082	
16.	[illegible]	086	

17.	[illegible]	073	[signature]
18.	[illegible]	097	[signature]
19.	[illegible]	093	[signature]
20.	[illegible]	092	[signature]
21.	[illegible]	099	[signature]
22.	[illegible]	098	[signature]
23.	[illegible]	070	[signature]
24.	[illegible]	095	[signature]
25.	Արթուր [illegible]	081	[signature]
26.	[illegible]	085	[signature]
27.	[illegible]	044	[signature]
28.	[illegible]	088	[signature]
29.	Արթուր [illegible]	101	[signature]
30	[illegible]	083	[signature]